Հավելված
ՀՀ կառավարության 2009 թվականի
հունվարի 8-ի N - Ն որոշման

ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍՏԱԺԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող՝ ոստիկանության, ազգային անվտանգության, հարկային, մաքսային մարմինների (մաքսանենգության և այլ հանցագործությունների խափանման ու բացահայտման նպատակով), քրեակատարողական ծառայության (միայն քրեակատարողական հիմնարկներում) պաշտոնատար անձանց՝ կազմակերպված հանցավոր խմբերում հատուկ առաջադրանքներ կատարելու, ինչպես նաև հաստիքային գաղտնի աշխատողների կարգավիճակով ծառայության ժամանակահատվածն արտոնյալ հաշվարկով մտնում է օպերատիվ-հետախուզական գործունեության մարմնում ծառայության ընդհանուր ստաժի մեջ։

2. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնում ծառայության ժամանակահատվածից արտոնյալ պայմաններով հաշվարկվում են հետևյալ տեսակները՝

1) օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի պաշտոնատար անձանց կազմակերպված հանցավոր խմբերում հատուկ առաջադրանքներ կատարելու ժամանակահատվածը՝ մեկ օրվա ծառայությունը երկու օր հաշվելու պայմանով.

2) օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի հաստիքային գաղտնի աշխատողների կարգավիճակով ծառայության ժամանակահատվածը՝ մեկ օրվա ծառայությունը մեկ և կես օր հաշվելու պայմանով։

3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված աշխատանքային ստաժի հաշվարկման մեկ այլ արտոնությունից օգտվելու դեպքում աշխատանքային ստաժը հաշվարկվում է ոչ ավելի, քան առավելագույնը՝ մեկ օրվա ծառայությունը երկու օր հաշվելու պայմանով։

4. Ծառայության ժամանակահատվածի արտոնյալ հաշվարկին վերաբերող փաստաթուղթը տրվում է համապատասխան մարմնի իրավասու անձի կողմից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ